# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
## ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*Հասցեն՝ Շահումյան 1*

*Հեռ. 2-20-20*
*Էլ. փոստ. yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am*


*N 150*

***04.05.2017թ.***

*ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ*

*ՊԱՐՈՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ*

Հարգելի պարոն մարզպետ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի պահանջներով, ուղարկվում է Եղեգնաձորի համայնքի ավագանու որոշումները:

Առդիր --8-- թերթ :

*Հարգանքով՝*

*ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*


*Կատ. աշխատակազմի քարտուղար՝ Անժելա Սարգսյան*
*+374 281 22020*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020, 0281 20630, 0281 25183, 0281 25120, yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ԱՊՐԻԼԻ 2017թվականի N 28

## ԽԱՆՈՒՄ ՆՎԵՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ, ԱՆՈՒՇ ԱՐԱՄԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով .

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Նկատի ունենալով Խանում Հարությունյանի և Անուշ Մկրտչյանի սոցիալական վիճակը, համայնքային բյուջեի սոցիալական հատուկ արտոնություննններ (այլ դասերին չպատկանող) ոլորտի բաժին 10 խումբ 7 դաս 1 այլ նպաստներ բյուջեից հոդվածից /հոդված 4729/ որպես օգնություն յուրաքանչյուրին հատկացնել 10 000-ական ՀՀ դրամ գումար :

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
4. ՌՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
5. ՍԱՔԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ
6. ՍՄԲԱՏՅԱՆ ՎԱԼՈԴՅԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020, 0281 20630, 0281 25183, 0281 25120, yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ԱՊՐԻԼԻ 2017թվականի N 27

## ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ 72-ՐԴ ԱՄՅԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով .

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համայնքի բյուջեի վարչական մասին բաժին 10 խումբ 7 դաս 1 սոցիալական պաշտպանություն `սոցիալական հատուկ արտոնություն /այլ դասերին չպատկանող/ ոլորտի այլ նպաստներ բյուջեից հոդվածից /հոդված 4729/ Հայրենական Մեծ Պատերազմի հաղթանակի 72-րդ ամյակի կապակցությամբ պատերազմի և աշխատանքի վետերաններին որպես օգնություն հատկացնել 100 հազ. դրամ գումար :
2. Գումարը փոխանցել Եղեգնաձորի վետերանների տարածքային խորհրդի ԱՇԻԲ ՓԲԸ բացված 2475800179000000 հ/հ-ին :

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
4. ՌՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
5. ՍԱՔԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ
6. ՍՄԲԱՏՅԱՆ ՎԱԼՈԴՅԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020, 0281 20630, 0281 25183, 0281 25120, yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
26 ԱՊՐԻԼԻ 2017թվականի N 26-Ն

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին ,,Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասին 5-րդ կետի և ,,Բյուջետային համակարգի մասին ,, Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներով .

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Տալ համաձայնություն համայնքի բյուջեի պահուստային ֆոնդի վարչական մասի բաժին 11 խումբ 1 դաս 2 ոլորտի համայնքային պահուստային միջոցներ հոդվածից /հոդված 4891/ 600 հազ. դրամ պակասեցնել ավելացնելով շրջակա միջավայրի պաշտպանություն /այլ դասերին չպատկանող /ոլորտի սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական համայնքային կազմակերպություններ հոդվածին /հոդված 4511/ , համայնքում կանաչապատ տարածքների պահպանման և խնամքի աշխատանքների ծավալների մեծացման հետ կապված ,,եղեգնաձորի համայնքային տնտեսություն,,ՀՈԱԿ-ի ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար :

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
4. ՌՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
5. ՍԱՔԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ
6. ՍՄԲԱՏՅԱՆ ՎԱԼՈԴՅԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020, 0281 20630, 0281 25183, 0281 25120, yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ
26 ԱՊՐԻԼԻ 2017թվականի N 25

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Եղեգնաձոր համայնքի և հարակից մի շարք համայնքների համար նախատեսված աղբավայր է համարվում 10-001-0342-0030 կադաստրային ծածկագրով 1.74 հա հողատարածքը:

Նշված ծածկագրով հողատարածքում օրենքով սահմանված շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննության անցկացման, ինչպես նաև ըստ պատշաճի տարածքը որպես աղբավայր օգտագործելու համար անհրաժեշտ է նշված գյուղատնտեսական նշանակության հողամասը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա :

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1- ին մասի 21-րդ կետի պահանջներով .

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. 1.74 հա մակերեսով՝ նպատակային նշանակությունը գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը արոտավայր հողատարածքը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա, որպես Եղեգնաձոր համայնքի և հարակից համանքների աղբավայր օգտագործելու համար:
2. Խնդրել ՀՀ Վայոց Ձորի մարզպետին սույն որոշումը ներկայացնելու ՀՀ Կառավարության քննարկմանը :

3. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի անդամների դրական եզրակացությունը ստանալու դեպքում տվյալ հողամասերի նպատակային նշանակությունը էներգետիկայի, կապի,տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա փոխելու նպատակով ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
4. ՌՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
5. ՍԱՔԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ
6. ՍՄԲԱՏՅԱՆ ՎԱԼՈԴՅԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020, 0281 20630, 0281 25183, 0281 25120, yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
**26 ԱՊՐԻԼԻ 2017թվականի N 24**

## ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Բարձրավոլտ էլեկտրացանցեր>> փակ բաժնետիրական ընկերությունը Եղեգնաձոր համայնքի բնակչից սեփականության իրավունքով ձեռք է բերել Եղեգնաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության 4 միավոր վարելահող 1367 քմ մակերեսով՝ ըստ հետևյալ կադաստրային ծածկագրերի 10-001-0333-0014,10-001-0366-0037,10-001-0327-0062,10-001-0367-0015 և գյուղատնտեսական նշանակության 2 միավոր խաղողի այգի 481 քմ մակերեսով՝ ըստ հետևյալ կադաստրային ծածկագրերի 10-001-0331-0020,10-001-0359-0043 :

Հողամասերի ձեռքբերման հիմնական նպատակը ՎԶՄԲ կողմից ֆինանսավորվող <<Էլեկտրակառավարման հուսալիություն>> ծրագրի շրջանակներում իրականացվող Հրազդան ՋԷԿ-ը Շինուհայր ենթակայանին միացնող 220 կվ էլեկտրահաղորդման օդային գծի վերակառուցման համար նախատեսված բարձրավոլտ էլեկտրական հենասյուների կառուցումն ու սպասարկումն է :

Վերը նշված ծածկագրով հողամասում կառուցապատման աշխատանքներ իրականացնելու համար անհրաժեշտ է նշված գյուղատնտեսական նշանակության հողամասը փոխադրել էներգետիկայի,կապի,տրանսպորտի,կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիայի :

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1- ին մասի 21-րդ կետի պահանջներով .

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 12.06.2014թ. <<Էլեկտրակառավարման հուսալիություն>> վարկային ծրագրի շրջանակներում <<Հրազդան ՋԷԿ-ը Շինուհայր ենթակայանին միացնող 220կվ էլեկտրահաղորդման օդային գծի վերակառուցման մասին>> N 599-Ն որոշման պահանջները, ՀՀ Վայոց Ձոր մարզի Եղեգնաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող <<ԲԷՑ>>ՓԲԸ սեփականություն հանդիսացող

կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա ՎՀՍԲ կողմից ֆինանսավորվող <<Էլեկտրակառավարման հուսալիություն>> ծրագրի շրջանակներում իրականացվող Հրազդան ՋԷԿ-ը Շինուհայր ենթակայանին միացնող 220 կվ էլեկտրահաղորդման օդային գծի վերակառուցման համար նախատեսված բարձրավոլտ էլեկտրական հենասյուների կառուցման ու սպասարկման համար:

2. Խնդրել ՀՀ Վայոց Ձորի մարզպետին սույն որոշումը ներկայացնելու ՀՀ Կառավարության քննարկմանը:

3. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի անդամների դրական եզրակացությունը ստանալու դեպքում տվյալ հողամասերի նպատակային նշանակությունը էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա փոխելու նպատակով ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը :

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից :

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
4. ՌՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
5. ՍԱՔԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ
6. ՍՄԲԱՏՅԱՆ ՎԱԼՈԴՅԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020, 0281 20630, 0281 25183, 0281 25120, yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ԱՊՐԻԼԻ 2017թվականի N 23

## 26/04/2017Թ.ԹԻՎ 4 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով .

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել 26/04/2017 թ. թիվ 4 արտահերթ նիստի օրակարգը՝

1. Հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին :
2. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին :
3. Համայնքային բյուջեում վերաբաշխում կատարելու մասին :
4. Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 72-րդ ամյակի կապակցությամբ պատերազմի եվ աշխատանքի վետերաններին դրամական օգնություն տալու մասին:
5. Խանում Նվերի Հարությունյանին, Անուշ Արամի Մկրտչյանին դրամական օգնություն տալու մասին

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
4. ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
5. ՍԱՔԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ
6. ՍՄԲԱՏՅԱՆ ՎԱԼՈԴՅԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ